18 սեպտեմբերի 2014 թվականի N 1016 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 790-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի և Լոռու մարզերում 2014 թվականին կարկտահարություններից տուժած համայնքների ցուցակները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 971-Ն ու 2013 թվականի օգոստոսի 22-ի N 905-Ն որոշումներում լրացումներ կատարելու մասին» N 790-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 1-ին կետը «հուլիսի 7-ին,» բառերից հետո լրացնել «26-ին, օգոստոսի 10-ին, 11-ին,» բառերով.

2) 2-րդ, 3-րդ կետերը և որոշման հավելվածի վերնագիրը «հուլիսի 7-ին, 26-ին,» բառերից հետո լրացնել «օգոստոսի 10-ին, 11-ին,» բառերով.

3) որոշման հավելվածի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ» բաժնում՝

ա. «Հացահատիկ» բառը փոխարինել «Հացահատիկ և հատիկաընդեղեն» բառերով,

բ. 34-րդ կետից հետո աղյուսակը լրացնել 35-րդ, 36-րդ, 37-րդ կետերով և «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

35.	Արփենի	16	70	-	-	-	-	-	-	-	-
36.	Կրասար	54,5	50	-	-	-	-	15	38	-	-
37.	Աշոցք	50	50-80	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը		11543.77	-	1179.16	-	390.15	-	633.22	1690	1272.02	3558

».

4) որոշման հավելվածի՝

ա. առաջին պարբերությունում «14980,57» թիվը փոխարինել «15101,07», իսկ «12826,13» թիվը՝ «12946,63» թվով,

բ. երկրորդ պարբերությունում «1822» թիվը փոխարինել «1860», իսկ «701,38» թիվը՝ «716,38» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ